

ՏԵՐՄԻՆԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Է. Գ. Ռ. ԱՂԱՅԱՆ

ՀՍՍՀ ԳԱ Հր. Անառնյանի անվան լեզվի ինստիտուտի ընդհանուր լեզվաբանության
սեկտորի վարիչ
ՀՍՍՀ ԳԱ քղթակից-անդամ

Տերմինաբանության մշակման ու հարստացման խնդիրը լեզուների բա-
ռապաշարի հարստացման ու կատարելագործման կարևորագույն հարցերից
մեկն է. առանց հարուստ ու մշակված տերմինաբանության չկա հարուստ ու
դարգացած լեզու: Եթե սովորական, այսպես կոչված առօրեական գործածու-
թյան բառերը ապահովում են ամենօրյա փոխադարձ հաղորդակցումը հասա-
րակական կյանքի առօրեական հարաբերությունների մեջ, ապա տերմինաբա-
նությունը ներկայացնում է հասարակության գիտական ու տեխնիկական առա-
ջադիմության ողջ բովանդակությունը և ապահովում բարձր զարգացման հա-
սած տեխնիկայի, արտադրության ու գիտության զանազան ճյուղերի կազմա-
կերպումն ու հետագա առաջընթացը: Այս է պատճառը, որ տերմինաբանության
խնդիրը հուզող հարցերից մեկն է դարձել ոչ միայն առանձին լեզուների մշակ-
ման ու հարստացման ոլորտում, այլ և առհասարակ՝ համաշխարհային գիտա-
կան մտքի բնագավառում:

Տերմինաբանության հարցերն այսօր կենտրոնական տեղ են գրավում այն-
պիսի բնագավառներում, ինչպիսիք են իրազեկման տեսությունն ու պրակտի-
կան, կիրառական տարրերի ճյուղերը, իմացության տեսությունը և այլն, և
այլն: Պատահական չէ նաև, որ շատ գիտությունների բնագավառներում պար-
բերաբար միջազգային տերմինաբանական գիտաժողովներն զբաղվում են
սովյալ բնագավառի տերմինաբանության մշակման ու ճշգրտման հարցերով
(«Երինակ՝ կազմախոսական տերմինների, բուսաբանական տերմինների, կեն-
սաբանական տերմինների և այլ գիտաճյուղերի տերմինների՝ վերջին տարիներ-
ում տեղի ունեցած ճշգրտումները՝ միջազգային մասշտաբի գիտաժողովնե-
րում»):

Հասկանալի է, որ տերմինաբանության այս կարևորությունը իր ամբողջ
սրությունը ծառանում է նաև առանձին լեզուների տերմինաբանության մշակ-
ման ու հարստացման գործով զբաղվողների առջև և, բնականաբար, առաջին
հերթին, լեզվաբանների առջև: Նշանակում է, միանգամայն օրինալի է նաև
այն, որ մեր մամուլում ու գիտական հրատարակությունների մեջ շատ հաճախ
արժարժվում են հայերենի տերմինաբանության խնդիրները՝ առաջ բերելով եր-
բման շատ բանավեճեր ու մտքերի բախումներ: Ըստ որում, այս դեպքում, քա-
նի որ խոսքը սովորաբար վերաբերում է մեկ առանձին ազգային լեզվի, սովյալ
դեպքում հայերենի, տերմինաբանությանն ու տերմինաշինությանը, ապա հաս-

կանալի է, որ խնդիրն ստանում է նաև մի երկրորդ կարևոր բնույթ՝ տերմինա-
րանության զարգացման ընդհանուր քաղաքականության բնույթ, ազգային լե-
զուների զարգացման քաղաքականության և, վերջին հաշվով, ազգային մշա-
կույթների զարգացման հետ կապված քաղաքական հարցի բնույթ: Անշուշտ այս
հանգամանքը բոլորովին էլ երկրորդական չէ, և միանգամայն օրինաշատ է
ազգային լեզուների զարգացմամբ շահագորգոված մասնագետների ու քաղա-
քական-հասարակական գործիչների գործուն հետաքրքրությունը այդ հարցի
ընդհանուր-տեսական և մասնավոր-գործնական լուծումներով:

Սակայն, ցավով պետք է նշել, որ մինչև այժմ, գոնե մեր հանրապետու-
թյան մեջ, խնդրի այս կողմը դարձել է գրեթե քննարկման միակ առարկան,
սովորի տակ թողնելով մյուս կարևոր կողմը՝ տերմինաբանության մշակման
ու կատարելագործման գուտ դիտական կողմը: Ուղում ենք ասել, թե մինչև
այժմ տերմինաբանության բնագավառում եղած վեճերը գրեթե առանց բա-
ցառության այն հարցին են վերաբերվել, թե արդյոք տերմինաբանության մեջ
պե՛տք է օգտագործել օտար փոխառությունները (ամիջազգային տերմինները),
թե ոչ, կամ ավելի ձիշտ՝ ո՛ր շահով պետք է պահպանել օտար տերմինները.
այս հարցադրման շուրջն են ծավալվել վեճերը, սուր բախումներն այս ուղղու-
թյամբ են երևան եկել:

Այն էլ ասենք, որ այդ վեճերն առանձնապես արդյունավետ չէին էլ կարող
լինել, որովհետև այն հիմնական դրույթները, որոնց շուրջը ծավալվել են վե-
ճերը, վաղուց արդեն լուծվել են և ձևակերպվել տերմինաբանական կոմիտեի
որոշումով՝ որպես օրենք: Այդ որոշման մեջ, որն ընդունված է 1955 թ., աս-
վում է.

«3. Նկատի ունենալով, որ հայոց լեզուն հարստանում է նորակերտ բառե-
րով ու տերմիններով՝ անհրաժեշտ համարել. ա) Թույլ չտալ հայերեն այնպիսի
տերմինների ու բառերի փոխարինումը օտար տերմիններով, որոնք համաժո-
ղովրդական գործածության մեջ են, մտնում են բառային կազմի գործուն մա-
ռի, հատկապես բառային հիմնական ֆոնդի մեջ: Բ) Հայոց լեզվի բառակազ-
մական օրենքներով կազմել նոր տերմիններ ու բառեր կամ հաստատել
ստեղծված այնպիսի տերմիններ ու բառեր, որոնք անհրաժեշտ են գիտության,
կենցաղի, հասարակական կյանքի, արվեստի ու արտադրության մեջ: Գ) Հայե-
րենի բառապաշարի հարստացման աղբյուրը հիմնականում համարել ժամա-
նակակից հայերենի բառային հիմնական ֆոնդը և բառային կազմը...

4. Հաշվի առնելով, որ սովետական հասարակարգում ազգային լեզուները
փոխադարձաբար օժանդակում և ազատորեն հարստացնում են միմյանց, որ
հայերենի բառային կազմի հարստանալու և բազմակողմանի դառնալու մի-
ջոցներից մեկն էլ նոր փոխառություններն են՝ գտնել անհրաժեշտ. ա) Դիտե-
լով ռուսաց լեզուն որպես Սովետական Միության ազգային լեզուներից ամե-
նաառաջատարը, որի բարերար ազդեցությամբ զարգանում են մյուս ազգային
լեզուները՝ ռուսերենից փոխ առնել այնպիսի տերմիններ ու բառեր, որոնց հա-
մարժեքը հայերենում չկա և հայերենի բառակազմական միջոցներով հաջող
կազմել հնարավոր չէ: Բ) Հնարավոր համարել բառական փոխառությունները
կատարել նաև այլ լեզուներից՝ նրանց տալով հայերենի արտասանական և ուղ-
ղագրական ձև...»¹

1 2. Խ. Բ ա ր ս Ե ղ յ ա ն, Տերմինաբանական ուղեցույց, Ե., 1964, էջ 10—11:

ինչպես տեսնում ենք, շարադրված են այն հիմնական տեսական-եկակետային դրույթները, որոնցով պետք է առաջնորդվել տերմինաշինության և առհասարակ՝ բառապաշարի մշակման ու հարստացման բնագավառում:

Սակայն, այդ դրույթներն իբրև ուղենիշ ընդունելով հանդերձ, պետք է նկատի ունենալ, որ տերմինաշինությունը և տերմինագործածությունը լուրջ տեսական հարց չէ, այլ ամենօրյա գործնական խնդիր: Ունենալ հիմնական տեսական ուղղություն տվող սկզբունքներ, դեռ չի նշանակում գործնականորեն լուծել տերմինաշինության ու տերմինագործածության առօրյա հարցերը:

Առհասարակ, թե հենց այս պահին ստացել ենք կառավարական հաղորդում, որն անմիջապես պետք է հրապարակել և որի մեջ կան այնպիսի տերմիններ, ինչպիսիք են էսկալացիա, ապարտեիդ և այլն: Թարգմանիչը և հրատարակիչը այս դեպքում հիշյալ օրենքից որևէ օգուտ քաղել չեն կարող: Նրանք, լավագույն դեպքում, եթե բավականաչափ մասնագիտական ու լեզվական գիտելիքներ ու հմտություն ունեն, իրենք պետք է ընտրություն կատարեն՝ թարգմանել այդ տերմինները արդեն ունեցած որևէ հայերեն համապատասխան իմաստ ունեցող բառով, թե ուղղակի գործածել այդ տերմինները: Օրենքը երկու հնարավորություն էլ տալիս է. եթե թարգմանիչը հիշյալ օտար բառերի փոխարեն գործածի, ասենք, վերընթացում կամ բարձրացում (էսկալացիա) և մեկուսարարություն (ապարտեիդ), ապա նա կարող է հիմնվել օրենքի 3-րդ և 4-րդ կետի վրա, իսկ եթե պարզապես գործածի այդ օտար տերմինները, ապա կհենվի հաջորդ (4-րդ) կետի և Բ հնթակետերի վրա:

Առաջին դեպքում եկական այն է, որ հայերենը հնարավորություն է տալիս օտար տերմինին համապատասխան սեփական բառը գործածել, երկրորդ դեպքում, ընդհակառակը, եկական այն է, որ հայերենը չունի համապատասխան բառ-տերմինը և նորակերտ տերմինն էլ ճիշտ կերպով չի արտահայտում օտար տերմինի իմաստը:

Հարց է առաջանում. ինչու է այդպես. մի՞թե իսկապես հիշյալ օրենքը ոչ մի արժեք չունի և իզուր է ընդունվել. բնականաբար՝ ոչ: Օրենքը միանգամայն ճիշտ է, շատ տեղին է ընդունվել և մեծ նշանակություն ունի տերմինաբանության կարգավորման ու կարգաբերման համար: Սակայն, չպետք է մոռանալ, որ օրենքը մեր լեզվի բառային կազմի, մասնավորապես տերմինաբանության մշակման ու հարստացման միայն ընդհանուր ուղղությունը կամ, որ նույնն է, քաղաքականությունն է սահմանում: Ելնելով այդ օրենքից, յուրաքանչյուր առանձին դեպքում պետք է որոշել, թե ինչպես ենք վարվում: Բայց գործնականորեն այս էլ անհնարին է, որովհետև անկարելի է ամեն մի բառի համար ինչ-որ մարմնի նիստ գտնարել կամ թեկուզ և՛ մասնագետների ինչ-որ կազմ զբաղեցնել. մեզանից յուրաքանչյուրն իր ամենօրյա աշխատանքի ընթացքում հանդիպում է գիտական տերմինների փոխառման կամ հայացման գործնական խնդրին և ձգտում է լուծել այդ խնդիրները: Եվ որովհետև գործնականորեն առաջնորդվելու միասնական գործնական ղեկավար չունենք, ուստի և տերմինաշինությունը մինչև այժմ ընթացել է մեծ մասամբ տարերային կերպով, մեծ մասամբ անհատների ճաշակին ու գիտելիքներին համապատասխան (նկատի չենք առնում այն տերմինաբանական բառարաններն ու բառացանկերը, որոնք հատուկ կերպով հաստատվել են կամ գոնե ինչ-որ մասնագիտական քննություն հավանության արժանացել):

Ցավալի է, բայց և անփառելի փաստ է, որ մինչև այժմ մեզանում չեն

զբաղվել այն հարցով, թե գործնական ի՞նչ սկզբունքներով պետք է առաջնորդվել լուրաքանչյուր տերմինի հայացման կամ փոխառության հարցում. այսպիսի սկզբունքներ մշակելը պահանջում է գիտական լուրջ ուսումնասիրություն՝ տարբեր բնագավառների ու գիտաձյուղերի տերմինաբանության նյութի հիման վրա:

Մինչև այժմ մեզ մոտ այս կարգի ուսումնասիրություն չի կատարվել գիտության ու տեխնիկայի ոչ մի բնագավառի վերաբերյալ, թեև ստեղծվել են բազմաթիվ տերմինաբանական բառարաններ շատ ու շատ գիտաձյուղերի ու բնագավառների համար: Մազաչափ անգամ շուգենալով նսեմացնել բառարանագիրների և, մասնավորապես, տերմինաբանական բառարանների ու բառացանկերի ստեղծողների շնորհակալ ու շատ գնահատելի գործը, պետք է շեշտենք, որ այդպիսի վիճակը դուռ է բացում կամայականությունների և քմահաճ տերմինագործածությունների առջև, որին մենք ականատես ենք հատկապես վերջին տասնամյակում:

Ահա այս է պատճառը, որ մենք գտնում ենք, թե տերմինաշինության և առհասարակ բառապաշարի հարստացման ու մշակման պրոբլեմը երկու կողմ ունի, որոնց գիտական քննությունը հավասարապես կարևոր է: Առաջին կողմը, տերմինաբանության հարստացման և առհասարակ փոխառությունների միջոցով լեզվի հարստացման հարցը, որ, ինչպես ասացինք, կապվում է ազգային լեզուների նկատմամբ վարվող քաղաքականության հետ, չափազանց շատ է արժարժված և մեր կարծիքով, հիմնականում լուծված է: Մենք ասում ենք լուծված է՝ նկատի ունենալով ոչ միայն տերմինաբանական կոմիտեի հիշյալ որոշումը, որը մեր լեզվական քաղաքականության հիմնական ուղղությունն է ներկայացնում, այլ և հասարակական զարգացման արդի էտապում գոյություն ունեցող պայմանները, որոնք իրենք արդեն լուծել են ազգային քաղաքականության գլխավոր խնդիրները:

Սովետական երկրում ապահովված է ազգային լեզուների անկաշկանդ զարգացումը: Ավելին. մեզ մոտ ստեղծվել են բոլոր հասարակական-քաղաքական ու մշակութային անհրաժեշտ պայմանները ազգային լեզուների հարստացման, նրանց բոլոր հնարավորությունների դրսևորման ու ծաղկման համար: Ուստի և այս տեսակետից մենք առանձնապես նոր ասելիք չունենք:

Այլ բնույթ է ստանում խնդիրը, երբ անդրադառնում ենք գործնականում այդ քաղաքականության կենսագործմանը. այստեղ արդեն մենք գործ ունենք ոչ միայն ընդհանուր ուղղության հետ, այլ և առանձին անհատների (գրողների, գիտնականների և այլն) լեզվական մշակույթի հետ: Եվ հենց այստեղ էլ, ամեն ինչ չէ, որ կարելի է բարվոք համարել: Բանն այն է, որ առանձին հեղինակային խոսքի մեջ (այս դեպքում հեղինակային խոսք արտահայտությունն առնում ենք ամենալայն՝ ընդհանրապես անհատի գրավոր խոսք իմաստով, և ոչ թե գեղարվեստական երկի հեղինակային խոսքը), մենք գործ ունենք ոչ միայն հեղինակի տեսակետի (պայմանականորեն կոչենք լեզվական քաղաքականություն), այլ և նրա լեզվական գիտելիքների, մայրենի լեզվին տիրապետելու, խոսքը գրավոր կերպով շարադրելու ունակության աստիճանի, լեզվական ճաշակի և ավելի նեղ անհատական բնույթի գործոնների հետ: Հասկանալի է, որ այդ բոլորն իրենց արահայտությունն են գտնում մեր գեղարվեստական, գիտական, գիտատեխնիկական, հրապարակախոսական գրականության լեզվի մեջ, մի խոսքով՝ մեր գրավոր խոսքի մեջ:

Որպեսզի ևրկար դատողություններ չանենք, մենք կբավականանանք միայն ևրկու օրինակի մեջբերումով. ա) «Ստեղծագործական բնաշրջության ընթացքի մեջ էլ հեղինակը վերլուծում և իմաստավորում է բանաստեղծի... անձնական կյանքի ու հոգեկան դրամայի բոլոր նվագները» (Գրական թերթ, 19/12, 69 թ.), բ) «Չենց այստեղ է ի հայտ գալիս վեպի կոնցեպտուալությունն ու էմոցիոնալ ռեֆլեքսիան, կերպարի պլաստիկությունն ու դինամիկան» (Գրական թերթ, 11/9, 70 թ.):

Մենք անուշադրություն ենք մատնում այն, որ այս երկու նախադասություններն էլ փրուռույց, ոչինչ չասող բառակույտներ են, և դրանք դիտում ենք միայն մեկ հետաքրքրող տեսանկյունով, այսինքն՝ լեզվի մաքրության և անմաքրության տեսանկյունով. մեր կարծիքով երկուսն էլ հավասարապես «անմաքուր» են:

Առաջինի հեղինակը ձգտել է ինչ գնով էլ լինի միայն հայերեն բառեր գործածել և սովորական գործածություն ունեցող էվոլյուցիա տերմինը դարձրել է բնաշրջություն, որ սխալ է. իհարկե, մեր գիտական գրականության մեջ մեկ-երկու տեղ դարձյալ նույն բնաշրջություն կամ բնաշրջում բառը գործածված է էվոլյուցիայի դիմաց, իսկ ավելի հաճախ՝ բարեշրջություն, բայց ո՛չ բարեշրջությունը, ո՛չ էլ, մանավանդ, բնաշրջությունը էվոլյուցիա չեն. այդ երկու բառերն իրենց իմաստով չեն արտահայտում էվոլյուցիա տերմինի գիտական բովանդակությունը. էվոլյուցիան ո՛չ դեպի բարին (այսինքն՝ լավը) շրջելը կամ շրջվելն է, ո՛չ էլ, մանավանդ, բնի, կամ բնության, կամ բնության շրջումը, կամ էլ բնական շրջումը. էվոլյուցիան երևույթի կամ առարկայի աստիճանական փոփոխությունների ներքին պրոցեսն է, ըստ որում, այդ պրոցեսը թեև սովորաբար տանում է դեպի ավելի բարձրը, դեպի կատարելագործումը, բայց չի բացառվում նաև հակառակը, այսինքն՝ էվոլյուցիան կարող է հանգեցնել նաև անկման կամ հետադիմության. ավելի նեղ՝ փիլիսոփայական իմաստով, էվոլյուցիան դարգացման ձև է, որը աստիճանական քանակական փոփոխություններով նախապատրաստում է որակական փոփոխությունը՝ անցումը կամ ռեզյուցիան (այս տերմինն էլ՝ փիլիսոփայական իմաստով):

Նրկրորդ նախադասության մեջ հակառակն է. հեղինակը բոլորովին էլ հոգ չի տարել հայերենի մասին և իր, առանց այն էլ խճողված, բառակույտի մեջ լցրել է անհարկի օտար բառեր (կոնցեպտուալություն, էմոցիոնալ, ռեֆլեքսիա, պլաստիկություն, դինամիկա): Պարզ է, որ այստեղ էլ ունենք մյուս ծայրահեղությունը, հայերենի խճողումը կամ աղճատումը (և դարձյալ՝ ինչպես կուզեք) անհարկի փոխառություններով:

Հարկ չկա ապացուցելու, որ բերված երկու նախադասություններն էլ մեր գրական լեզվի նորմաների խախտում են ներկայացնում, անհատական կամայական մոտեցում են դրսևորում և հավասարապես մերժելի են: Սակայն անհատական ասելով չպետք է կարծել, թե սա վերաբերում է լոկ առանձին անհատների, տվյալ դեպքում, հենց միայն այդ նախադասությունների հեղինակներին. ո՛չ, դրանք, այսպես թե այնպես, դրսևորում են որոշակի մոտեցում, թեկուզ և փոքրաթիվ մարդկանց հատուկ: Ուստի և պետք է պայքարել այդ երկու մոտեցումների դրսևորումների դեմ: Բայց ինչպե՞ս. այս է, ահա, որ գործնականորեն պետք է լուծել:

Մեր կարծիքով, այստեղ առաջին հերթին գործի ամբողջ ծանրությունն քնկնում է տերմինաբանական կոմիտեի և զանազան հիմնարկների տերմինա-

բանական հանձնաժողովների, մասնագիտական խորհուրդների և նման մարմինների վրա: Որպեսզի ամեն մարդ իր ցանկացած ձևով տվյալ գիտական տերմինը թարգմանի կամ, ընդհակառակն, օտար տերմինը շորդեգրի, պետք է ունենանք բոլորիս համար պարտադիր տերմինարաններ:

Ժամանակն է, որ մեր տերմինաբանությունը միասնական ու պարտագիր լինի բոլորի համար. եթե տերմինաբանական կոմիտեն հարկ համարեց հատուկ որոշումով օրինականացնել կուսակցություն, հեղափոխություն, հանրապետություն բառերի գործածությունը, եթե այդ նույն կոմիտեն հատուկ որոշումով հաստատեց դիվանագիտական և գյուղատնտեսական բազմաթիվ տերմինների ցանկերը, ապա նույնը պետք է անի նաև մյուս բնագավառների տերմինների վերաբերյալ (անշուշտ, տերմինների այն մասի, որ վեճերի տեղիք է տալիս):

Այնուհետև, պետք է տերմինաբանության սկզբունքներին համապատասխանեցնել մեր երկրի վրա ու բացատրական բառարանները, որոնք հաճախ նույնպես անմիօրինակության պատճառ են դառնում կամ, պարզապես, անմիօրինակությունների բուն աղբյուր են հանդիսանում: Օրինակ՝ ՀՍՍՀ ԳԱ լեզվի ինստիտուտի հրատարակած «Ռուս-հայերեն բառարանում» և դրանից հետո լույս տեսած՝ Ա. Ղարիբյանի «Ռուս-հայերեն բառարանում» ռուսերեն ПЫЛЕСОС բառի դիմաց տրված է երկու բառ՝ փոշեծուծ, փոշեհան, Ռուս-հայերեն պոլիտեխնիկական բառարանում՝ փոշեծուծ, փոշեֆաղիչ. մեկ տերմինի դիմաց այսպիսով ստացվել է հայերեն երեք բառ և, բնականաբար, ընտրությունը թողնված է գործածողներին, իսկ գործածողներն էլ, օգտվելով այդ ազատությունից (սահման քաջաց, զենն յուրյանց) իրենց հերթին ավելացրել են այդ շարքը, և գրականության մեջ գործածված ենք գտնում՝ փոշեծուծ, փոշեհան, փոշեհավաք, փոշեծծիչ, փոշեֆաղ, փոշեֆաղիչ:

Որպես սկզբունք, բառարանների մեջ գիտական-տեխնիկական, քաղաքական, մշակութային և այլ կարգի տերմիններից յուրաքանչյուրի դիմաց պետք է դնել միայն մեկ տերմին (մեկ բառ), հակառակ պարագայում մենք չենք կարող հասնել միօրինակության, և միշտ դուռը կբացենք կամայականությունների համար:

Եվ այսպես, գործնական առաջին քայլը պետք է լինի շարունակել վաղուց արդեն սկսված աշխատանքը նոր թափով ու ավելի մեծ մասշտաբներով. պարբերաբար հաստատել զանազան բնագավառների տերմինարաններ (տերմինների ցանկեր), հրապարակել դրանք և պարտադիր գործածության մեջ մտցնել:

Տերմինաբանության և առհասարակ բառապաշարի անհրաժեշտ միօրինակության պահպանման գործում հսկայական պատասխանատվություն են կրում նաև հրատարակչական մարմինները, Հայաստանի հեռագրական գործակալությունը, մեր պարբերական մամուլի խմբագրությունները: Այս մարմինները պետք է իրավունք ունենան (իսկ դրա համար նրանք իրենց ձեռքի տակ պետք է ունենան այնպիսի բառացանկեր, ինչպես, օրինակ, դիվանագիտական տերմինների հաստատված բառացանկն է) պահպանելու տերմինների միօրինակությունը, և ինչպես որ բնագրից ջնջում են ռեպրուցիա, կոնստիտուցիա և այլ բառերն ու փոխարինում հեղափոխություն, սահմանադրություն և այլ համապատասխան բառերով, այդպես էլ ջնջեն, ասենք, քնաշրջություն բառը՝ դրելով էվոլյուցիա:

նվ, վերջապես, քանի որ խոսքը գործնական կողմի մասին է, ապա ավելորդ է հիշել, որ, որքան էլ ցավալի լինի, այնուամենայնիվ, ձիշտ է այն, որ մեր ոչ բոլոր հեղինակներն են հարկ եղած չափով տիրապետում մայրենի լեզվին: Ուստի և անհրաժեշտ է գրսևորել խոստապահանջություն հեղինակների լեզվական խոսքի նկատմամբ:

Ասացինք արդեն, որ տերմինաբանական կոմիտեի որոշումը տալիս է միայն ընդհանուր ուղղությունը, բայց ոչ՝ այս կամ այն առանձին տերմինի փոխառման կամ հայացման գործնական սկզբունքը, մինչդեռ մենք մեր ամենօրյա աշխատանքի ընթացքում գործ ունենք մեծ մասամբ առանձին տերմինների հետ և, բնականաբար, մեզանից յուրաքանչյուրի առջև ամեն օր ծառանում է որևէ առանձին տերմին թարգմանելու կամ շփարգմանելու հարցը: Ինչպե՞ս վարվենք ուրեմն. կարելի՞ է արդյոք ունենալ նաև այնպիսի սկզբունքներ, որոնցից ելնելով, կարողանայինք յուրաքանչյուր առանձին դեպքում ասել, որ այս բառը պետք է թարգմանենք կամ համապատասխան հայակերտ նոր տերմինով փոխարինենք, իսկ մյուսը՝ պետք է պահենք (օտար տերմինը վերցնենք): Կարծում ենք, որ կարելի է: Դրա համար, ամենից առաջ, մենք պետք է որոշակի դասակարգում կատարենք տերմինաբանության մեջ:

Առաջին դասակարգումը, մեր կարծիքով, ճյուղային կամ գիտաճյուղային դասակարգումն է: Պետք է դասակարգել տերմիններն ըստ նրանց ճյուղերի և որոշել, թե ո՞ր ճյուղերի տերմինները ընդհանրապես հայերեն են (և պետք է հայերեն լինեն) և ո՞ր բնագավառներինը՝ ոչ: Այսպիսի, թող թույլ տրվի ասել, «տարբերային», ավելի ճիշտ՝ ավանդական դասակարգման փաստեր մենք ունենք և պահպանում ենք. օրինակ՝ քիմիական տարրերի մի զգալի մասի անվանումները և քիմիական միացությունների անվանումներն անխտր՝ պահպանում ենք լատինահունական տերմիններով: Բժշկական տերմինաբանության մեջ՝ բոլոր գեղերի լատինական (և հունական) անվանումները պահպանում ենք և նույնիսկ այն դեպքերում, երբ տվյալ դեղամիջոցը Հայաստանում և հայ գիտնականների կողմից է ստեղծվել, ստանում է լատինական անվանում (օր. գանգլերոն, արպենալ և այլն): Հիվանդությունների անվանումները, եթե լատիներեն կամ հունարեն են, մեծ մասամբ պահպանում ենք (ստենոկարդիա, աստմա, ինֆարկտ, մենինգիտ և այլն): Այսպիսի խմբավորումներ կարելի է կատարել գիտական հետազոտությունում և դա զգալիորեն կօգնի որոշակի գործնական մոտեցում գտնելուն՝ յուրաքանչյուր առանձին տերմինի մասին դատողություն անելիս:

Հր. Աճառյանն, օրինակ, իր կողմից նշում է, որ «նույնիսկ հասարակ կյանքի մեջ անհրաժեշտ է մեզ փոխ առնել ռուսերեն բաղմաթիվ սովորական բառեր: Հայերենը գիտե միայն ռուսերեն և գրական, ռուսերենից պիտի վերցնենք նրա զանազան տեսակները (կարտուզ, կեպի, ցիլինդր, շապո, պանամա, մաշիշ, բերետկա): Հայերենը գիտե միայն ռուսերեն և սալը. ռուսերենից պիտի վերցնենք նրանց զանազան տեսակները (ֆուրգոն, կալյասկա, տրոյկա, ֆայտոն, պրալյուտկա, կարետա են)»²...»: Հր. Աճառյանի այս հատվածը և դրա շարունակությունը, որի մեջ նա դարձյալ բաղմաթիվ բառեր է թվում, հնարավորություն է տալիս որոշ խմբավորումներ կատարել:

Այսպես, օրինակ՝ նորաձևությունների հետ կապված զանազան անվանումները չեն թարգմանվում, կամ եթե թարգմանվում էլ են, տարածում չեն

² Հ. Աճառյան, Հայոց լեզվի պատմություն, II մաս, 1951, էջ 588:

գտնում: Դրա պատճառը շատ պարզ է. նորաձևութիւնների հետ անմիջապէս խոսակցական լեզվի մեջ են թափանցում նաև նրանց անվանումները և սովորական, ամենօրյա գործածութիւն են ստանում. դրանց լարգամանութիւնը կամ հայակերտ նոր տերմինով փոխարինելը կատարվում է գրական ձանապարհով և հայակերտ տերմինը շատ թեք գործածութիւն ունենում է միայն գրականութան մեջ, առանց լայն գործածութիւն ստանալու և առանց խոսակցական լեզվի մեջ սովորական դառնալու: Եթե դրան ավելացնենք նաև այն, որ նորաձևութիւնների հաճախակի փոփոխութեան հետևանքով զանազան տարազների, հագուստների և այլնի անվանումներն էլ (թե՛ օտար և թե՛ հայակերտ) իրենց հետ դուրս են գալիս գործածութիւնից, ապա հասկանալի կլինի, որ իբրև կանոն, տարազի հետ եկող ու գնացող տերմինների հայացումը իզուր աշխատանք է:

Այսպես, օրինակ, քսանական թվականներին շատ հարգի էր ու տարածված տղամարդկանց շալվարի մի տեսակը, որ կոչվում էր գալիֆե. երեսունական թվականներին այդ ձևը դուրս եկավ գործածութիւնից (պահպանվելով գիւղորական և այլ կարգի հատուկ համազգեստների մեջ)՝ իր հետ տանելով նաև անվանումը. երեսունական թվականներին մեծ տարածում գտավ նախ շատ նեղ շալվարը՝ «բուլկլան», ապա՝ շատ լայն փողքերով շալվարը՝ «չառլստոնը»: Այդ երկուսն էլ հետագայում դուրս եկան մոդայից, իրենց հետ տանելով նաև անվանումները: Այսպես են նաև կտորեղենի, կահարասիների և կենցաղային շատ այլ առարկաների անվանումները, այն առարկաների, որոնք հաճախակի փոփոխութեան են ենթակա: Քսանական-երեսունական թվականներին շատ սովորական էին շեվյոտ, կրեթեշին, ֆայլեշին և այլն, այնուհետև՝ կուլիերկոտ, բոստոն և այլն: Մի ժամանակ գործածական էր շիֆոնեթկա, որ այժմ գործածութիւնից դուրս է դալիս և այլն, և այլն:

Նշանակում է, այդ կարգի բառերը, եթե արդեն մեր ունեցածների վերականգնումը չեն,— իսկ մոգան այդպիսի քմահաճույքներ ունի,— հարկավոր էլ չէ հայացնել, որովհետև գա միայն անօգուտ աշխատանք է. այդ կարգի առարկաների (զգեստների, գործվածքների և այլն) անվանումները մտնում են խոսակցական լեզվի մեջ՝ հենց որ դրանք կյանքում երևան են դալիս, և դուրս են գալիս մոդայի փոխվելու հետ միաժամանակ: Անշուշտ, մեր խոսքը բացարձակ իմաստով չպետք է հասկանալ, և այստեղ էլ ինչ որ չափով ընտրութիւն պետք է կատարել, սակայն ընդհանուր առմամբ սկզբունքը մնում է որպէս ելակետ:

Դրանց հակառակ, գիտութիւնների անվանումները սովորաբար չեն փոխառվում, այլ ունեն իրենց հայերեն անվանումները. մի քանի անվանումներից (մաթեմատիկա, ֆիզիկա, քիմիա, փիլիսոփայութիւն և այլն) բացի, բոլոր գիտութիւնների անվանումները հայերեն են, ինչպես՝ հանրաճաշիվ, կենսաբանութիւն, երկրաչափութիւն, գյուղատնտեսութիւն, տնտեսագիտութիւն, ֆառաբանութիւն, աստղագիտութիւն, բանասիրութիւն, լեզվաբանութիւն, գրականագիտութիւն, երկրաբանութիւն, եռանկյունաչափութիւն, մոլորագիտութիւն և այլն, և այլն: Ուստի և՛ այնպիսի անվանումների գործածութիւնը, ինչպիսիք են՝ բիոլոգիա, բոտանիկա, գեոլոգիա, գեոդեզիա, ֆիզիոլոգիա, առնատմիա և այլն, համապատասխան կենսաբանութիւն, բուսաբանութիւն, երկրաբանութիւն, երկրաբաշխութիւն, բնախոսութիւն, կազմախոսութիւն և այլ բառերի փոխարեն, չի արդարանում, և պետք է դիտել պարզապէս իբրև անփութ վերաբերմունք մեր լեզվի տերմինաբանութեան նկատմամբ:

Մեկ թվում է, որ հատուկ ուսումնասիրություններ բառերի այսպիսի խմբավորումները և տարբեր կարգերի մեջ մտնող տերմինների մասին որոշակի սկզբունք մշակելն ու դրանց հիման վրա զործնական եզրակացություններ հանելը մեծապես կօգնի տերմինաբանության զործնական խնդիրների լուծմանը, և մենք ստիպված չենք լինի հորինել այնպիսի բառեր, որոնք երբեք էլ զործածության մեջ չեն մտնելու և միայն բառարաններն են ծանրաբեռնելու կամ, ընդհակառակն, ականատես չենք լինի մեր սովորական բառերը օտար բառերով անհարկի փոխարինելու փաստին:

Իվ, վերջապես, կա հարցի զուտ լեզվաբանական-գիտական կողմը նաև: Հաճախ է պատահում, որ մենք այս կամ այն տերմինը հայացքում ենք և նույնիսկ լայն դործածություն ենք տալիս, կամ ավելի ճիշտ, պրակտիկալում այդ հայերեն բառը մեծ դործածություն է ստանում, և այնուամենայնիվ, հաճախ ստիպված ենք լինում դարձյալ հրաժարվել այդ բառից, որը, թվում է, թե պրակտիկալում իրեն արդարացրել է, ու դրա փոխարեն գործածել օտար տերմինը: Ունի՞ սա արդյոք ինչ-որ գիտական հիմունք, և եթե ունի, ո՞րն է:

Անշուշտ, առաջին հերթին այստեղ մենք գործ ունենք իմաստային ճշգրտության հետ: Որպեսզի տվյալ հայերեն բառը գործածենք համապատասխան օտար տերմինի փոխարեն, պետք է, որ այդ հայերեն բառը ճիշտ կերպով արտահայտի համապատասխան տերմինի գիտական (տեխնիկական, արտադրական և այլն) իմաստը: Կոմպոզիտոր բառի փոխարեն վերջին տարիներում հաճախ գործածում են երգահան բառը, որը անցյալում էլ գործածվել է, և սակայն, սլարի է, որ այդ բառը չի կարող դուրս մղել կոմպոզիտոր բառին, առաջին հերթին իմաստի ոչ լիարժեք համապատասխանության պատճառով: Կոմպոզիտոր-ը իր դեմքով, երբ ստեղծող կամ ստեղծագործող չէ, այլ՝ երաժշտական ոտնդածությունների հեղինակող՝ ստեղծագործող (մյուս իմաստները մի կողմ ենք թողնում): Հասկանալի է, որ այս դեպքում կոմպոզիտոր բառը պետք է հազթի, հակառակ բոլոր «երգահանականների» ջանքերին: Նույնպես և՛ էվոլյուցիա բառը, որի մասին վերը խոսեցինք:

Կա սակայն տերմինների գնահատման ու բնութագրման նաև զուտ լեզվաբանական կողմը, որ կարելի է հիմնականում բնորոշել երկու բառով՝ արգասավորություն և համակարգայնություն: Առաջինը՝ արգասավորությունը նկատի ունի այն, թե որքանով տվյալ տերմինը (բառը) կարող է կենսունակ լինել նաև բարդությունների ու ածանցումների միջոցով համապատասխան ածականներ (կամ հակառակը, եթե ածական է՝ գոյականներ), բայեր, մակբայներ կազմելու և առհասարակ տվյալ տերմինից բաղադրվող բառեր կերտելու համար: Վերը բերված էվոլյուցիա, ինչպես և կոմպոզիտոր բառերը պետք է պահպանեն նաև ա՛յն պատճառով, որ դրանցից կազմված բառերը չենք կարող կազմել հիշյալ հայերեն բառերից: Ուստի տերմինի փոխանակումը չի արդարանում: Եթե մենք օտար տերմինը փոխարինում ենք հայերենով, ապա պետք է մտածենք նաև այն մասին, որ դրանից կարողանանք ստանալ բոլոր անհրաժեշտ հարակից բառերը, հակառակ դեպքում մեկ առանձին տերմինի հայացումը, առանց հարակից բառերի, չի արդարանում:

Համակարգայնությունն ասելով հասկանում ենք տվյալ տերմինի ամբողջ համակարգի հնարավոր փոխարինումը կամ պահպանումը. դա ըստ էության նախորդի, եթե կարելի է այսպես ասել, մյուս երեսն է կամ լրացումը: Գիտական տերմիններն իրարից առանձնացած չեն. նրանք շատ հաճախ կապակցված

են մի ամբողջ շարք հարակից տերմինների հետ և դրանց միասնությունը մի ամբողջ համակարգ են կազմում. այսպիսի դեպքերում, նպատակահարմար չէ համակարգից միայն մեկ առանձին տերմին հայացնել, մյուսները պահպանելով, կամ ընդհակառակն, մեկ օտար տերմինը պահել, մյուս բոլորը հայացնելով (կամ արդեն հայերենն ունենալով): Օրինակ՝ վերջերս մեզ մոտ գործածում են զբոսաշրջիկ բառը, որ, մեր խոր համոզմունքով, երբեք էլ հաստատուն արմատներ չի գտնելու և չի փոխարինելու տուրիստ բառին. այդ բառի կենսունակությունը խանգարում է ոչ միայն իմաստային ոչ լիարժեքությունը, այլ և արգասավորության ու նամակարգայնության բացակայությունը. այսպես՝ նույն տուրիստ բառի համակարգը կազմող տուրիզմ, տուրքագա և նման բառերը հազիվ թե հնարավոր լինի փոխարինել զբոսաշրջություն. զբոսաբազա, կամ զբոսաշրջաբազա կամ զբոսաշրջակայան և այլն. իսկ լեռնային տուրիզմն էլ չի կարելի դարձնել լեռնային զբոսաշրջություն: Ի դեպ, այս վերջինիս համար ունենք լեռնաբազա, որից լեռնաբազալորդ, լեռնաբազալորդություն և այլն, որոնք մի առանձին փունջ են կազմում տուրիզմ-ից ծագող բառերի համակարգի մեջ կամ, ինչպես լեզվաբաններն են ասում՝ ենթահամակարգ են համակարգի մեջ և բնականաբար կարող են տուրիզմ (տուրիստ, տուրիստական և այլն) բառերից անկախ դիտվել:

Բերենք հակառակ օրինակը, երբ համակարգը թելադրում է օտար բառի փոխարեն ստեղծել հայերենը. վերջին տասնամյակներում (առաջին հերթին Վինների ուսումնասիրություններով) ստեղծվել է գիտության մի առանձին բնագավառ՝ ինֆորմացիայի տեսությունը. ինֆորմացիա բառը մեր լեզվում վաղուց արդեն գործածվել է իր մյուս իմաստներով (հաղորդում, տեղեկություն և այլն), ուստի և այս նոր բնագավառի համար էլ այժմ գործածվում է: Սակայն նոր գիտաճյուղն իր հետ բերել է բառերի մի ամբողջ համակարգ, ինչպես և ինֆորմացիա բառի նոր իմաստներ: Մեր առաջ քաշած սկզբունքը թելադրում է, որպեսզի ինֆորմացիա բառը իր նոր գործածությամբ, որպես գիտության անվանում և այդ գիտության մեջ ստացած յուրահատուկ իմաստներով համապատասխան հայերեն տերմինով փոխարինենք: Ռուսերենում, ինչպես և շատ ուրիշ լեզուներում, բացի իր սովորական իմաստներից (հաղորդում, տեղեկություն և այլն), տվյալ նոր գիտաճյուղի մեջ ինֆորմացիա բառն ունի հետևյալ իմաստները. 1. հասարակության հաղորդակցական գործունեությունը, 2. հաղորդակցման բովանդակությունը, 3. հաղորդման մեջ բովանդակվող յուրաքանչյուր առանձին տեղեկությունը, որպես հաղորդման բովանդակության ծավալի չափման միավոր, 4. հաղորդման գործողությունը, հաղորդելը: Ռուսերենում, այդ իմաստներից գոնե մեկը (հաղորդման գործողությունը) տարբերակելու համար գործածում են информирование բառը: Այդ գիտության համար ինֆորմացիա բառի պահպանումը կստիպեր մեզ նեղ մասնագիտական իմաստների համար առանց տարբերակման գործածել միայն մեկ ընդհանուր տերմին, որը գիտության արդի պահանջներին չի համապատասխանում. այդպես է վարվել, օրինակ, Վինների գրքի թարգմանիչը, որտեղ կարդում ենք. «ինֆորմացիան պարունակում է այնքան ինֆորմացիա, որքան տեղեկություն կա»: Հայերենի համար այսպիսի նույնաբանությունները, այն էլ գիտական ուսումնասիրությունների մեջ, ընդունելի չեն, ուստի և պետք է որոնենք ելքը:

Մեր կարծիքով այդ ելքը հենց գիտության անվանումը հայերեն բառով փոխարինելու մեջ է. մենք, իմաստային լիարժեք համապատասխանություն

պահպանելով, կարող ենք ինֆորմացիայի տեսություն անվանումը փոխարինել իրազեկման տեսություն անվանումով, և այս դեպքում հնարավորություն կունենանք նոր գիտության այդ տերմինի հետ կապված բոլոր տերմինները տարրերակել, արտահայտելով նույնիսկ այն իմաստային նրբագույն տարբերությունները, որոնք ուրիշ լեզուներ հնարավորություն չունեն արտահայտելու։ օրինակ, հենց ինֆորմացիա բառի 4-րդ իմաստի համար ռուսերենում գործածվող информирование տերմինն ունի դարձյալ երկու իմաստ (խոսքը նեղ մասնագիտական իմաստների մասին է)։ 1. հաղորդելը, հաղորդում, 2. տվյալ հաղորդումը (տեղեկությունը) քարտի կամ ժապավենի վրա գրանցելը (քարտը կամ ժապավենը տեղեկությունով օժտելը) կամ այլ կերպ՝ հաղորդման բովանդակությունը համապատասխան համակարգով (պայմանական նշաններով, անցքեր անելով և այլն) մեկ համակարգից մյուսին փոխանցելը։ Մեր հիշած բառն ընդունելով ինֆորմացիա-ի փոխարեն, կարող ենք ազատորեն գործածել՝ իրազեկել-իրազեկավորել (իրազեկում-իրազեկավորում), իրազեկույթ րառերը, առաջինը՝ ինֆորմացիա-հաղորդման գործողություն, երկրորդը՝ հաղորդման բովանդակությունը տվյալ համակարգին հաղորդելը, երրորդը՝ հաղորդման յուրաքանչյուր առանձին տեղեկությունը նշանակությամբ։ Դրա հետ միաժամանակ, մենք կարող ենք կազմել ամբողջ համակարգը ներկայացնող իրազեկորդ, իրազեկային, իրազեկիչ, իրազեկավորել, իրազեկա-գտանալին, իրազեկա-հաղորդիչ և բազմաթիվ նոր տերմիններ։

Նույն ձևով էլ հենց նույն այդ գիտության պրակտիկայում գործածվող պերֆորացիոն բառի հետ կարող ենք վարվել։ այդ բառը կազմված է պերֆորացիոն և ֆաբա բառերից և առայժմ միակ գործածականն է իրազեկային պրակտիկայում։ Սակայն դրա գործածությունը մեր լեզվում չի ապահովում գիտական պահանջները։ վերցնելով այդ բառը, մենք ստիպված պետք է լինենք վերցնել նաև պերֆորացիա, պերֆորելնտ կամ պերֆործապավեն, պերֆորացիոն և կազմել պերֆորացնել, պերֆորավորել, պերֆորավորում և այլն, և այլն։ Հայերենը հնարավորություն է տալիս կազմել պերֆորացիոն-ի շատ հաջող համարժեքը և դրա հիմքի վրա ստանալ ամբողջ համակարգը ներկայացնող տերմինները՝ արտահայտելով իմաստային այնպիսի ճշգրտություն և տարբերակուններ, որ այլ լեզուները չունեն։

Այսպես, հայերենում ունենք սուր «1. անցք, 2. բույն, 3. մասնավորապես օձի բույն» նշանակությամբ։ այս բառը գործածվել է աշխարհաբարում միայն զեղարվեստական դրականության մեջ, այն էլ շատ հազվադեպ, իսկ այժմ բոլորովին չի գործածվում։ սա հնարավորություն է տալիս այդ բառը դիտելու որպես գործառական (ֆունկցիոնալ) և իմաստային ծանրաբեռնվածությունից ազատ բառ և լեզվի մեջ մուծելու տերմինային իմաստով՝ «անցք» նշանակությամբ։ Այս դեպքում մենք պերֆորացիա բառով կազմված հապավական պերֆորացիոն բառը կփոխարինենք սուրբաբար բառով, համապատասխանորեն՝ պերֆորացիոն կամ պերֆորելնտ բառը՝ սուրբապավեն բառով, իսկ դրանց հիմքի վրա հնարավորություն կունենանք կազմելու տերմինների մի ամբողջ շարք՝ սուրատանց (перфорационное отверстие), սուրատանի (պերֆորացիա «քարտի կամ ժապավենի պերֆորացիոն անցքերի» սուրատանցքերի ամբողջությունը), սուրատում (պերֆորացիա, перфорирование, քարտի կամ ժապավենի վրա անցքեր անելը), համապատասխանորեն՝ սուրատել (перфорировать, քարտի կամ ժապավենի վրա անցքեր անել), սուրատվորել (перфори-

ՐՕՅԱԾԵ, իրազեկումը քարտի կամ ժապավենի վրա գրանցել սորատանցքեր՝ պերֆորացիաներ անելով), սոքատիչ (պերֆորատոր), սոքատավորիչ (պերֆորատոր, իրազեկումը պերֆորացիաներով՝ սորատավորումով քարտին կամ ժապավենին փոխանցող՝ գրանցող սարք կամ մեքենա) և այլն, և այլն: Ինչպես տեսնում ենք, այստեղ և՛ իմաստային ճշգրտության, և՛ յուրաքանչյուր իմաստի համար համապատասխան մեկ տերմին ունենալու, և՛ արգասավորության ու համակարգայնության պահանջները լիակատար կերպով բավարարվում են, ուստի և պետք է հրաժարվել օտար բառից և գործածել հայերենը:

Համակարգայնության հետ սերտորեն կապվում է նաև միօրինակության կամ միասնական մոտեցման սկզբունքը, այսինքն՝ տվյալ օտար տերմինի և նրանից կազմված այլ տերմինների նկատմամբ միատեսակ մոտեցում ունենալը. ըստ այս սկզբունքի, եթե տվյալ օտար տերմինի դիմաց արդեն ունենք կայուն գործածություն ունեցող հայերեն բառը, ապա նրանից կազմվող նորակերտ տերմիններն էլ, համապատասխանաբար, որպես կանոն, պետք է փոխարինենք հայակերտ բառերով և՛ հակառակը: Այսպես, օրինակ, կոսմոս բառի դիմաց ունենք տիեզերք բառը, իսկ կոսմոս բաղադրիչի համար՝ տիեզեր-(ա)- բաղադրիչը (տիեզերագիտություն, տիեզերագոյացում և այլն). հասկանալի է, որ նորակազմ կոսմոնոսիլ, կոսմոնոսիլիկա և այլ բառերն էլ պետք է փոխարինվեն (և փոխարինված են) տիեզերագնաց, տիեզերագնացություն և այլ բառերով. հանձնարարելի չէ, որ ամբողջ շարք կազմող այդ տերմինների կողքին վերցնենք նույն բաղադրիչով կազմված, ասենք, կոսմոդրոմ բառը. միասնականության ու համակարգայնության սկզբունքով առաջնորդվելով, պետք է այդ բառն էլ փոխարինենք համապատասխան հայակերտ բառով: Նույն ձևով էլ բիո- բաղադրիչի համար ունենք կենս-(ա) բաղադրիչը (կենսաբանություն, կենսածնություն, կենսուժ և այլն), ուստի և հանձնարարելի չէ բիոֆիլիա, բիոմիկսանիկա և նման բառերի գործածությունը. պետք է կազմել զրանց հայերեն համապատասխանները (կենսաքիմիա, կենսամեխանիկա և այլն): Մյուս կողմից, նույն բաղադրիչով կազմված բիոլոգիզմ տերմինը չպետք է թարգմանել, ելնելով սկզբունքից, որովհետև արվեստի, դրականության, գիտության և այլ ուղղությունների, հոսանքների, դպրոցների անվանումները սովորաբար չենք թարգմանում (օր. ռեալիզմ, ռոմանտիզմ, ստրուկտուրալիզմ (թեև ստրուկտուրա թարգմանում ենք կառուցվածք), նիհիլիզմ, սոցիոլոգիզմ, իդեալիզմ, մատերիալիզմ և այլն, և այլն):

Ինչպես տեսնում ենք, բացի ընդհանուր քաղաքական-լեզվաշինական ուղղությունը կամ դիրքորոշումը որոշելուց, մենք կարող ենք նաև ղուտ դիտական մոտեցումով մեր տերմինաբանության հարստացման ու մշակման գործնական կողմնորոշիչ սկզբունքներ գտնել ու սահմանել, որոնք հնարավորություն կտան յուրաքանչյուր անհրաժեշտ դեպքում ճիշտ ընտրություն կատարելու օտար տերմինը յուրացնելու կամ նրա համապատասխան հայերենը կազմելու գործում:

Ինչ վերաբերում է այն ընդհանուր հարցին, թե արդյոք հայերեն տերմիններ պե՞տք է հորինել, թե՞ օտար տերմինները պահել, որպես ընդհանուր դրույթ, ապա այդ վերացական վեճը մենք համարում ենք իր դարն ապրած վեճ. այսօր այդ հարցը, ինչպես վերն ասացինք, տեսականորեն լուծված է արդեն, մնում է, որ գործնականորեն կենսագործենք այդ լուծումը՝ իր կոնկրետ արտահայտություններով: